

Էջ 210. տող 2.

“ Այլ գինոյ և իւզ, ձուկն, պանիր, կոզի, կաղաի, բաժին, շնուկ, կաթն, խեր, և ձկնամորե՛, : Ուղղ. կացուի (կզտի), ժամփիկ.... խեչ կամ խիճ ? կրոի քամած լոռն է. ժամփիկն փսորած պանիրն. խիճն. նոր ծնած անասնոյ կաթն զոր մակարդեւով շինեն՝ դալը :

Էջ 218. տող 36.

“ Աղդ զոր օրինակ եկեղեցին կոչեցաք քահանային, : Ուղղ. հարսն ? ամուսին ? Հմմտ. փեսայն Քրիստոս՝ հարսն եկեղեցին. խսկ քահանայն ունի զոտեղի Քրիստոսի, որով եկեղեցին լինի նորա հարսն :

Հ. Գ. ՆԱԽԵՊԵՏԵՎԱՆ

ԱՅԼԵՒԱՅԼՔ

— Անգլիացի ենթասպայ մը այսուհետև պիտի շկարենայ բարձրանալ՝ եթէ յաջողութեամբ չանցնէ իր... առողջապահութեան քննութիւնները : Ամէն հնթասպայ իր զունդին առողջաբանութեան զասատուն պիտի ըլլայ : — Զարմանայիք. ուրիշ տեղ գորավարները քաջութեամբ մնոնիլ կը սովորեցնան զինուորներոն, խսկ Անգլիացիները... քաջառողջ ապրիլ :

— Պէտոնի արքունի գրատունը 1, 230, 000 հատոր ունի. Մոնարքինը՝ 1, 110, 000, Աթրապառիկինը 900, 000), Կոթոթինկայինը 536, 00), լայգիկինը՝ 500, 000.

— Զուրիցերոյ նաւատորմիզը՝ անտարակոյս՝ անգլիականն չափ գրաւած չէ ամբարհու ուշադրութիւնը. պէսք է խոսովազնիլ սակայն թէ նա նաւական պատկանելի ոյժ մ'ունի, իր լիճերուն համեմատութեամբ : 279 նաև ունի, ուրոնցմէ ունանի 120(), ճամբորդ շրջեցնելու չափ մնաւութիւն ունին :

— Սիմոնի հնարած ելեկորական թնդանօթը (1) քիլոմետր հնուու կը նետէ ամինէն ծանր զնդակը : Զունի ճայն և ծուխ. աւելի արժան է :

— Անգլիացիները իրենց պատերազմական նաւերուն մէջ՝ քարիզ պիտի զործածեն՝ կաթսաները տաքցնելու համար : — Այս որոշողութիւնը կարենութենէ զուրկ չէ Բագուրի նաւթաշանքու աէքերուն համար :

— Ֆրանսացիք՝ իրենց ազգի նուազման առջն առնելու միակ միջոց մը զոտած են. զամունացողները տուրքի ենթարկել, տուրքը քաժնել ընտանեած իրերի իրենց որդիներու թուրին համեմատութեամբ :

Ա. Լ. Ա. Հ. Վ. Է Թ Ի Ն Ե Ր Բ

ՊԱՏԱՇԱՍՏԻ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԱՑ

ԺԴ.

1700 թուականին մօտեր հարձի Աւանակ կամսարական ուղղափառ հաւատարի մէջ ալ շատ անուանի էր և բարեպաշտ. ասիկա իւր մէկ աղջիկն Արծիթի հարսնացուցեր էր, ուր բոլոր գեղացիք յուղափառութիւն գարձեր էին, և հնաշէն հոյակապ եկեղեցի մ'ունէին, որն որ հիմա ալ կայ : Այն սուրբ Աստուածածնի Եկեղեցւոյն յիշատակ թողեր է մէկ չայիր մը նաևճի Սահակն, որ ամէն տարի պատարագ ըսուփ իւր ննջեցելոց հոգեոյն . նոյն չայիրն զեռ եւս կայ և յիշատակարանն ալ եկեղեցւոյ մէջ աւազանին մօտ քարի մը վրայ գրուած է : 1702 թուականին սկսաւ Հայոց հալածումը կաթողիկաց զէմ՝ Եւփրեմ և Աւետիք պատրիարքաց օրը, և օրէ օր սաստկանալ սկսաւ : 1707՝ Յովհաննէս Զմիւռնացի Հայոց պատրիարք այս հալածանք վերջին աստիճան հասաւց. երանելի կոմիտաս բահանան աս թուականին մէջ նահատակվեցաւ. շատերն այս պատճառաւ տաճկացան, շատերն ալ ի ծառայութիւն թիոյ, այս է քիւրէկը, զացին ի կ. Պոլիս : Այս դառն հալածանք գրսի երկիրներն ալ հասաւ, որ ի Հինձք գիւղ Գամսարենց նալճի Սահակ, կոստան, նոր Պարուն և Խայլի բռնվեցան, և չորս հատ կարնեցի երեւելի իշխանաց և ուրիշներու հետ բանտ զրպեցան երկու ամիս, և ետքը տուգանք տալով ազատեցան :

1. Յովհաննէս Զմիւռնացի պատրիարքին կաթողիկայ Հայոց դէմ չալածանցը թէպէտէ 1707թուն սկսաւ ի կ. Պոլիս, սակայն զաւաներուն մէջ և մասնաւորապէս ի կարին 1715ին հզար կը պատմէ Զամեկան (Պատմ. Հա. Գ. Եր. 761) տուելով. «Կաւան և ի կարին բազար զրագում ի քահանայից և յաշխարհականաց, և եղու ի կոճկու, յորց ումնաց մեռան անդէն, և ումնաց յետ ժամանակաց զերծան» : ըայց վերոյիշեալ Գամսարենքը չշիշեր աժննելին :